

Բ Ա Ն Ա Ս Է Ր

ԱՄՍԱԹԵՐԹ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

Ե ՏՄԲՐԻ 1903	Տարեկան՝ 15 Ֆր. = 6 ռբլ. = 3 դրլար :	ՅԵԻՍ. -ՅԼԻՍ. ԹԻԻ 6-7
-----------------	---	-------------------------

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՆՊԵՐԸ

ԹԻՔԱՀԱՅՈՑ ՄԷՉ

Առաջնորդական խնդիրը , Թրքահայոց մէջ , էն հրատապ հարցերէն մին է : Անոր կարեւորութիւնը , հոս , արասահմանի մէջ , բացատրելու հարկ չկայ , ամենքս ալ — դաւառացիներս — փորձառապէս գիտենք թէ անչափանդիր , գործունեայ եւ խելացի եկեղեցական մը՝ գաւառի մը հայ ժողովուրդը հոգեւորապէս հովուելու համար Առաջնորդ կամ Տեղապահ կարգուած՝ կրնայ անհուն ծառայութիւններ մատուցանել իրեն խնամքին յանձնուած հօտին : Նոյն իսկ անոնք որոնք կրօնական խնդիրներու մէջ սկեպտիկ երեւնալը իրենց պատիւ կը համարին , չեն ուրանար հայ արժանաւոր կղերին՝ հայ ազգին բարոյականին , կրթականին — եւ՝ նիւթականին — վրայ ունեցած հզօր եւ բարեբար ազդեցութիւնը :

Անարժան կղերին երեսէն՝ աս ազգին կրած տառապանքներուն ալ ո՛չ հաշիւը եւ ո՛չ համարը կայ :

Կարժէ զբաղիլ պահ մը անով :

Պատրիարքարանը , ունենալով իր տրամադրութեան տակ հոյլ մը եպիսկոպոսաց եւ երամ մը վարդապետաց , երկար ատենէ ի վեր , բայց մանաւանդ վերջին տարիներս , անհնարին դժուարութիւններ կը կրէ գաւառները զոհացնելու համար :

Այս եկեղեցականները պատրաստուած չեն այն պաշտօնին՝ յոր կը կոչէ , ճարահատ , Ազգ. Վարչութիւնը : Պաշտօնի դասաւորութեան ու կարգապահութեան բացարձակ բացակայութիւնը չէ ներած , նոյն իսկ անոնց՝ որոնք տարիներով — իբրեւ թէ — գաւառի ժողովուրդը հոփուած են , հմտանալ վարչական դժուարութեանց , վարուելու եղանակին եւ ստանալ ակնածանքի ու պատկառանքի պաշարը , որ մեծագոյն օժանդակը պիտի ըլլայ իրենց պաշտօնավարութեան :

Հազուադէպ չէ տեսնել որ աշխիւ արամադրութեամբ եւ անձնութեան պաշարով մը ճամբայ կեննեն , յուսահատ ու գլխիկոր , վերայ տուած նախապէս այսպէս կամ այնպէս շինած համբաւնին ալ , «առեալ զվեղար եւ զփիլոն» կը դառնան ետ , եթէ չյամառին մնալ հաւկառակ ժողովրդեան մեծագոյն մասին դժգոհութեան :

Դժուար չէ պատճառը հասկնալ :

Անմշակ , ինքնաբոյս բերք մ'է մեր եկեղեցականութիւնը որուն արդիւնաւորութեան համար ազգը , բնաւ կամ գրեթէ , չէ աշխատած : Երբեմն երեւցած փայլուն դէմքերն կը յիշեցնեն պարզապէս թուփերու մէկ անկիւնը ծլող մանիշակը կամ դաշտի շուշանը :

Մինչեւ Արմաշու Դպրեմանուց հաստատութիւնը , եկեղեցականութիւնը փոքրաւորներու , — սպասաւոր ըսել է , — ծոյլերու եւ փառամոլներու ասպարէզն էր , ուր ուզողը կրնար մտնել , բաւական է որ մաքուր անկողնէ ծնած ըլլար , ասկէ զատ ոչի'նչ կը հետաքրքրէր ձեռնադրող եպիսկոպոսը :

Այս պայմաններուն տակ աճող, սնող եկեղեցականութիւնէն անձնուելիութիւն , պարսաճանաչութիւն եւ յարատեւ ու խղճամիտ պաշտօնավարութիւն պահանջել , եւ ե'ւս հովուական , վարչական կարողութիւն սպասել՝ չափազանց միամիտ ըլլալ կը նշանակէ :

Հնձեղու համար պէտք է նախ սերմանել :

• •

Դպրեմանքը , որ կը պակսէր առ մեկ դարերէ ի վեր , դեռ հազիւ տասներեք տարիներէ ի վեր դոյութիւն ունի Արմաշի մէջ , Իր պատրիարքութեան ամբողջ սեւողութեան միջոցին թերեւս միակ բայց չստ կարեւոր գործն էր որ յղացաւ եւ յաջողեցաւ ի գլուխ հանել Աշրգեան պատրիարք :

Այս նոր դպրոցը , որուն հետ սերտ կերպով կապուած պիտի մընան Օրմանեան եւ Դուրեան անուոնները , արդէն գործնականապէս սկսած է ցոյց տալ իր արդիւնքը :

Ես չեմ պահանջեր , ոմանց պէս , այս երէկի տղաքներէն այն առաւելութիւնները՝ զորս տարիքն ու փորձառութիւնը միայն կրնան տալ , եւ չեմ տեսներ այն թերութիւններն ալ՝ որոնք անկարելի է որ չերեւնային դպրոցին գրասեղանէն գաւառի մը առաջնորդութեան պաշտօնը վարել կոշտող երիտասարդ վարդապետի մը վրայ :

Իր ամբողջութեան մէջ քննադատութեան առնելով , ինչ որ օրինաւոր է , կը տեսնենք թէ Դպրեմանքը տուած է աւելի քան կարելին :

Մեզի պէտք է աշխարհական , նոր , զարգացած եւ ազատամիտ եկեղեցականութիւն մը , որ քաջութիւն ունենայ թօթափել տալու

ժողովրդին հաստատումատ նախապաշարունմները , ցոյց տալով եկեղեցին իր բուն սրբութեան եւ մաքրութեան մէջ , որ բարեկարգութեան հետամուտ եւ բարեկարգման կուսակից ըլլայ , որ ուժով զինուի պահպանողական հին սարբին դէմ , եւ եկեղեցականութիւնը ժողովրդեան բարօրութեան միջոց ու գործի նկատէ , եւ ոչ մակաբոյժներու asile մը :

Այդ եկեղեցականութիւնը վաղը պիտի ունենանք , Զարխաբանը կը խոստանայ տալ :

• •

Բայց որպէսզի այս նոր դպրոցը կարենայ իր վրայ սեւեռուած յոյսերն իրականացնել , պէտք է օրէնքներն , որոնց պիտի ենթարկուին , համաձայն ըլլան ժամանակին պահանջման :

Մեր ամուրի եկեղեցականութեան համար , պաշտօնը՝ ուր պիտի փայլին եւ ուր ցոյց պիտի տան իրենց իրական արժանիքն ու կարողութիւնը՝ թեմական առաջնորդութեանց պաշտօնն է :

Այս պաշտօնը Թրքահայոց մէջ անկման շրջանին մէջ է . այս անկումին օգնեց մասամբ Սահմանադրութիւնը , այն արամադրութեամբ որով հայ եկեղեցիին ռամկավարական սկզբանց հետեւելով ընտրութիւնը գաւառին յանձնեց , առանց ընտրելիին պաշտօնավարութեան ժամանակ մը որոշելու , որով մէկ կողմանէ անյարմար ու անարժան ընտրութիւններն բազմացան , միւս կողմանէ ցկեանս գաւառի մը կապուած միալու պարտականութեան յանձնառութիւնը յուսահատութիւն պատճառեց էն գործունեայ եկեղեցականին իսկ : Հետեւանք այն եղաւ որ անհնազանդ եկեղեցականաց թիւն բազմացաւ , Պատրիարքարանի աղդեցութիւնն զգալի կերպով սկիարացաւ , գաւառներէն շատեր անհամաձայնութեան եւ երկպարակութեան մասնուեցան , եւ շատեր ալ անհովիւ եւ անխնամ մնացին :

Ըստ ներկայ դրութեան գրեթէ դիպուածն է որ կառավարողէ այս կամ այն եկեղեցականը գէպի այս կամ այն թիմն , Դաւառական ժողովոց անդամներն որոնք պաշտօն ունին ընտրելու իրենց առաջնորդը , չեն ճանչնար բուն արժանիքը կամ յարմարութիւնը իրենց գաւառին համար՝ իրենց լսած կամ նախասիրած եկեղեցականին : Այս կերպով շատ անգամ ցմահ Բալու կամ Սղերդ միալու կը դատապարտուի եկեղեցական մը որ կարնոյ , Վանայ կամ Իզմիրի թեմերը կառավարելու կարողութեամբ օժտուած է , ինչպէս կը պատահի շատ անգամ ալ որ կարին , Վան կամ Իզմիր ընտրած ըլլալով եկեղեցական մը , առանց անոր բուն արժանիքը ու յարմարութիւնը ճանչնալու , մէկ երկու ամիսէն դառն յուսախաբութեան մը կը մատուին : Այս յուսախաբութիւնը այնքան մեծ կը ըլլայ գաւառին համար , որքան դառն՝ յուսահատութիւնը եկեղեցականին՝ առաջին պարագային :

• •

Այս անպատեհութիւնները դարմանելու համար Ազգ. Վարչութիւնը սպասած չէ ցարդ մեր խորհուրդին , սակայն տարին անգամ մը իր տուած նոր որոշումներն ցոյց կուտան թէ գոնէ առժամաբար արմատական փոփոխութիւն մը ընելու գաղափարը դեռ ներս մտած չէ Պատրիարքարանի սեմէն :

Ահա էն վերջին որոշումը զոր կը քաղեմ Պօլսոյ թերթէ մը :

«Երբ վարդապետի մը եպիսկոպոսական վկայական տալ յարմար գատուի, նախապէս խոստմնագիր մը պիտի առնուի իրմէ թէ չպիտի լըքանէ այն վիճակը որուն վրայ եպիսկոպոս կը ձեռնադրուի եւ երբ առաջնորդութենէ հրաժարի իսկ , պարտաւոր պիտի ըլլայ այն թեմին մէջ բնակել եւ այլուր չերթալ» :

Եւ այս՝ որովհետեւ վարդապետներն եպիսկոպոս ըլլալէ վերջ գործօն ծառայութենէ հրաժեշտ կուտան :

Սակայն ես կը կարծեմ թէ այս որոշումը տուող ժողովականներէն զատ ոչ մի հայ , աշխարական կամ եկեղեցական , կայ որ հաւատայ անոր գործադրելիութեան :

Ասանկ որոշումներ ժողովի մը արժանապատուութիւնն ու վարկը ցնջելու միայն կը ծառայեն :

Ժողովի մը որոշումը մարդկային , բանաւոր եւ գործադրելի ըլլալու է :

Կեդրոնական Վարչութեան անդամներն , անբացատրելի յամառութեամբ մը , կը մերժեն հաւատալ հիմնական փոփոխութեան մը կարելիութեան , եւ իբրեւ անբռնաբարելի վարդապետութիւն մը, եպիսկոպոսի մը ո՛ր եւ է գաւառի մը վրայ ձեռնադրուելու գաղափարին կառչած մնացած են , առանց սակայն ուշաբերելու որ այդ երկարատեւ յամառութիւնը ո՛ր եւ է արդիւնք տուած չէ , եւ երբ հարկ կըլլայ արժանաւոր վարդապետ մը , որ գաւառէ մը ներկայացուած չէ , եպիսկոպոս ձեռնադրել , դրան եպիսկոպոս անունով կը ձեռնադրեն : Բայց ինչպէս դրան եպիսկոպոսութիւնը այսօր պոյսութիւն չունի , գաւառի մը վրայ ցկեանս եպիսկոպոս ձեռնադրելու դրութիւնն ալ իրականութեան մէջ դադրած է շատոնց գոյութիւն ունենալէ , եւ սակայն կը շարունակենք վիճակաւոր եպիսկոպոսներ ձեռնադրել ինչպէս կը ձեռնադրենք դրան եպիսկոպոսներ : Ասի պարզապէս ծիծաղելի է :

Այս դրութեան փոփոխութիւնը , կամ պարզապէս արդէն հաստատուած իրաց վիճակին համակերպութիւնը, ո՛չ Սահմանադրութեան (*) ոգւոյն կը հակառակի եւ ոչ ալ եկեղեցիին տիրապետական հաստատութեան :

(*) Այս կէտը Սահմանադրութեան մէջ արդէն հիմնական կէտ մը չէ եւ մեր Սահմանադրութեան հեղինակներն անսրբագրելի բան մը արտայայտած ըլլալու յաւակնութիւնը չունեցան , ընդհակառակն՝ հինգ տարին անգամ մը վերաքննելի հոգեկեցին այն :

Ընդհանրապէս եւ մանաւանդ այս վերջին տարիներս գաւառական պաշտօններէ խոյս տուող եւ Պօլիս դեգերող եկեղեցականներ են որ կը ներկայայնեն կրօն. ժողովը, եւ, ո՛վ մեծի մեղացա, պարտաճանաչու թեան, անձնութեան յորդորներ կը կարդան եւ խստամբեր օրէնքներ կը հաստատեն . . . ուրիշներուն համար, Վարչութեան աշխարհական անդամներն ալ պարզապէս կը հետեւին իրենց անդամակից ս. Հարց իբրեւ անվիճելի հեղինակութիւններու :

Արեւմտեան պէտքերն ու դէպքերն աւելի զօրաւոր կըլլան քան Պատրիարքարանի անորոշ, անդոյն եւ դեղեկոտ ժողովականներն : Կարծեմ 97ին էր երբ Պատրիարքարանը որոշեց Նիկիոմիդիոյ Առաջնորդ Ստեփան եպիսկոպոսը Վան փոխադրել, իսկ Սամսոնի տեղապահ Բարգէն վարդապետը Մուշ փոխադրեց, այդ եկեղեցականներն այդ թեմերուն աւելի յարմար նկատելով : Դժբաղդարար այս նախաքայլը, չեմ գիտեր ինչու, չլարունակուեցաւ :

Ըստ իս, ամէն դժուարութիւն պիտի անհետանայ, մէկ օրէն միւսը բոլոր գաւառներն զոհացում պիտի ստանան, երբ առաջնորդական պաշտօններն ժամանակաւոր ըլլան, երբ վարդապետ կամ եպիսկոպոս հեազհեաէ կոչուին Կեդրոնի կոլովանէ ըստ իրենց ցոյց տուած կարողութեան՝ հովուելու աւելի բազմապահանջ թեմեր, եւ երբ Պատրիարքարանը իր կրօն. ժողովը կազմէ ոչ թէ դասալիք, ծոյլ եւ իրենց կոչումը յաւէտ մոռցող եկեղեցականներէ, այլ գաւառներու մէջ իր գործունէութեամբ փայլող պատուական եկեղեցականներէ, երբեմն հանգիստ տալով անոնց այսպէս : Այն ատեն ոչ միայն կրօն. ժողովը իր վարկը վերստացած պիտի ըլլայ, այլ եւ արժանաւորութիւնը բարձրացած, աշխատութիւնը վարձատրուած եւ անձնութիւնը քաջալուրուած պիտի ըլլայ :

Կարելի ընե՞նք ծառայութիւնը, համակերպի՞նք ժամանակին պահանջումներուն, եւ ոչ միայն մեր անցեալին փորձառութիւնէն այլ եւ մեր դրացիներէն, այլ եւ նոյն իսկ պետական կազմակերպութեանց վարչական եղանակէն օգտուինք եւ մեր ուսեալ, երիտասարդ նոր Դպրոցն առաջնորդենք ի գործ բանաւոր օրէնքներով միայն :

Յ. ԱԶԳԱՊԵՏԵԱՆ